ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2014, 67, № 2-3, 81-82

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԽԱԼԱԹՅԱՆ ԷՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ
(ծննդյան 80-ամյակին)

Լրացավ ճանաչված հիդրոերկրաբան, հանքային ջրերի խոշոր գիտակ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու ***Էրիկ Սուրենի Խալաթյանի*** ծննդյան 80-ամյակը: Է.Խալաթյանը ծնվել է 1934թ. հունիսի 9-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում:

1957թ., ավարտելով ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը, նա մինչ այսօր, շուրջ 57 տարի, անընդմեջ աշխատելով Հայաստանի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, իր կյանքը և գիտական գործունեությունը նվիրաբերել է հիդրոերկրաբանական և հիդրոերկրաքիմիական տարաբնույթ հարցերի ուսումնասիրման և բացահայտման գործին:

1962-65թթ. Է.Խալաթյանը սովորում է ասպիրանտուրայում, հայազգի անվանի գիտնական, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ն.Ի.Խիտարովի ղեկավարությամբ: 1971թ. Երևանում, Պետական համալսարանի գիտական խորհրդում, հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Բորի բաշխման օրինաչափությունները Հայկական ՍՍՀ հանքային ջրերում» թեմայով և ստանում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա հետազոտությունների արդյունքում Հայաստանի տարածքում հայտնաբերվել և անջատվել են տարբեր տիպերի հանքային ջրերի ելքեր, հանքավայրեր և պրովինցիաներ, բացահայտվել են նրանց առաջացման օրինաչափությունները, քիմիական կազմի առանձնահատկությունները, բուժիչ հատկությունները և օգտագործման ոլորտները: Քաջատեղյակ լինելով և տիրապետելով հարուստ ու արժեքավոր մատենագրական նյութերին, Է.Խալաթյանն իր աշխատություններում հաճախ անդրադարձ է կատարում մարդկանց առողջության համար հանքային ջրերի նշանակության վերաբերյալ դեռ միջնադարյան նշանավոր գիտնականների դիտարկումներին: Նրա ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի տարածքում առաջին անգամ անջատվել են ածխաթթու ջրերի բորաբեր-հազվագյուտ ալկալամետաղային պրովինցիաները, մշակվել և առաջարկվել են նմանատիպ հանքային ջրերից մի շարք հազվագյուտ ալկալային մետաղների՝ լիթիումի, ռուբիդիումի,

ցեզիումի և տարբեր միացությունների կորզման էկոլոգիապես անվտանգ գիտատեխնոլոգիական աշխատանքների կազմակերպման հնարավորությունները:

Հատկապես արժեքավոր են Է.Ս.Խալաթյանի հետազոտությունները՝ կապված ածխաթթու ջրերի երկրաքիմիայի, հիդրոերկրաքիմիական կանխատեսման ժամանակ ալգորիթմների դասակարգման փորձի կիրառման հետ: Բացի այդ, նա, Լայպցիգի Միջուկային հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ, կատարել է նաև Հայաստանի հանքային ջրերի հիմնական հանքավայրերի ջրերի համալիր իզոտոպային հետազոտություններ: Շնորհիվ այս հետազոտությունների, ածխաթթվային թերմերի և սառը ջրերի ծագումնաբանությունն ի ցույց դրվեց նոր լույսի տակ: Գիտահետազոտական գործունեությունը Է.Խալաթյանը հաջողությամբ և սիրով համատեղել է մանկավարժական գործունեության հետ, դասավանդելով ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում, ինչպես նաև մասնակցել է Երևանի Ֆիզիոթերապիայի և առողջարանային բուժման գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրերի իրականացմանը:

Է.Ս.Խալաթյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների, իսկ 27-րդ Միջազգային երկրաբանական կոնգրեսում ներկայացվել է նրա համահեղինակությամբ կազմված ՀՍՍՀ հիդրոերկրաբանության առանձնահատկություններին նվիրված զեկույցը, ինչպես նաև կոնգրեսի ուղղեցույցը:

Է.Ս.Խալաթյանը հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնք տպագրվել են հանրապետական, համամիութենական ու միջազգային գիտական պարբերականներում, երեք մենագրությունների և բազմաթիվ ձեռագիր հաշվետվությունների: Նրա համահեղինակությամբ են կազմվել Հայաստանի Ազգային ատլասի Հիդրոերկրաբանություն և Հանքային ջրեր քարտեզները, ինչպես նաև “Հայաստանի բնաշխարհի” և “Հայկական Հանրագիտարանի” համապատասխան պրակները:

Է.Ս.Խալաթյանը համահեղինակությամբ ունի նաև 6 հեղինակային վկայագիր:

Այսօր էլ Է.Ս.Խալաթյանը շարունակում է իր գործունեությունը՝ ուղղված Հայաստանի հանքային ջրերի ուսումնասիրմանը և երիտասարդական խանդավառությամբ է արձագանքում հարազատ ինստիտուտի ամեն մի գիտական ձեռքբերմանն ու հաջողությանը:

Ջերմորեն և սրտանց շնորհավորելով Էրիկ Սուրենի Խալաթյանին ծննդյան 80-ամյա հոբելյանի առիթով, մաղթում ենք նրան քաջառողջություն և ամենայն բարիք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն